ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 56 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 92-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի փետրվարի 8-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N 92-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ձրտուք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2024 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված՝ N 2024/12/23-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վաղատուր բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցում՝ 1,655,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ձրտուք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2024 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված՝ N 2024/12/23-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գորիս

համայնքի Բարձրաված բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցում՝ 2,475,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

12.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ